

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Արծրունի Աղաջանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 1-ին հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը չունի «միջազգային իրավական ակտեր», այդ իսկ պատճառով ներկայացված օրենքի նախագիծը չի կարող նպաստել դրանց դրույթների զարգացմանը, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը ներկայացված օրենքի նախագծի ընդունմամբ չեն կարող զարգանալ:

2. 2-րդ հոդվածում՝

1) «խտրականություն» հասկացությունն առաջարկում ենք խմբագրել՝ հիմք ընդունելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայում տրված հասկացությունը.

2) «զենդերային հավասարություն» հասկացությունը պետք է բխի «խտրականություն» հասկացության սահմանումից.

3) առաջարկում ենք խմբագրել «հավասար հնարավորություններ» հասկացության սահմանումը, ինչպես նաև հստակեցնել «քվոտա» հասկացության սահմանումը.

4) անհրաժեշտ է տալ «զենդերային ցուցիչ» և «գանգատ» հասկացությունների սահմանումը:

3. 3-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ներկայումս առկա են կանանց ու տղամարդկանց իրավունքների այլ անհավասարության դեպքեր: Այսպես, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն կանանց ու տղամարդկանց համար սահմանված է ամուսնության տարբեր տարիք, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի համաձայն կանանց ու տղամարդկանց համար սահմանված է կենսաթոշակի անցնելու տարբեր տարիք: Նույն հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով սահմանված» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները:

4. 6-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) մոնիթորինգ իրականացնելու պարտականությունը կարող է դրվել միայն համապատասխան իրավասու պետական մարմինների վրա.

2) հիմնավորման կարիք ունի ինստիտուցիոնալ կառույցի ստեղծումը: Պարզ չէ ինստիտուցիոնալ կառույցի և նախագծի 15-րդ հոդվածում նշված լիազորված մարմնի դերակատարումները: Բացի դրանից, կառույցի ստեղծումը կարող է հանգեցնել լրացուցիչ բյուջետային հատկացման անհրաժեշտության:

5. 7-րդ հոդվածից պարզ չէ, թե հոդվածով նախատեսված պարտականությունը պետական որ մարմինը պետք է իրականացնի: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ օրենսդիր մարմինը ձևավորվում է ընտրությունների արդյունքում, և պետությունը հոդվածով նախատեսված երաշխիք տալ չի կարող:

6. 8-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց ղեկավար կազմը ձևավորվում և գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին» և այլ օրենքներով: Հոդվածով նախատեսված բնագավառներում նրանց իրավական ակտ ընդունելու լիազորություն վերապահված չէ:

7. 9-րդ հոդվածի`

1) 1-ին մասում նշված մրցույթի մասնակցության երաշխիքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության բազմաթիվ օրենքներով, որոնցով նախատեսված չէ միայն մեկ սեռի ներկայացուցիչների համար մրցույթ հայտարարելը: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների համաձայն ոչ բոլոր պաշտոններն են զբաղեցվում մրցույթով:

2) 2-րդ մասում նշված երաշխիքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության բազմաթիվ օրենքներով, որոնցով ատեստավորմանը մասնակցելը համարվում է պետական ծառայողի ծառայողական պարտականություն:

8. 10-րդ հոդվածով նախատեսվող հարաբերություններն արդեն իսկ ամրագրված են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

9. 12-րդ հոդվածն առաջարկում ենք հանել, քանի որ դրանով նախատեսված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով: Բացի դրանից, հոդվածի վերջին պարբերությամբ նախատեսված` «**1/3-ը** գերազանցող ազատումների» դեպքում խոսքը կարող է վերաբերել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի **116-րդ** հոդվածով նախատեսված «զանգվածային ազատումներին», իսկ հիշյալ դրույթի պահանջներով առաջնորդվելու պարագայում կարող է առաջանալ խտրականություն` կախված կազմակերպության աշխատողների թվի սեռային համամասնությունից:

10. 13-րդ հոդվածում`

1) նշված արարքների համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը նախատեսում է քրեական պատասխանատվություն: Հոդվածը պահպանելու

դեպքում այն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի պահանջներին.

2) 1-ին պարբերությունում նշված «զանգատ» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ.

3) 2-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **83.5-րդ** հոդվածի **2-րդ** կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **9-րդ** հոդվածի **4-րդ** մասի **2-րդ** կետի պահանջները:

11. 14-րդ հոդվածում նախատեսված նորմը հակասում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին:

12. 15-րդ հոդվածում պարզ չէ, թե խոսքը ինչ «լիցենզավորված մարմնի (անձի) մասին է և ում կողմից է այն նշանակվում: Միաժամանակ անհրաժեշտ է հստակեցնել տրվելիք տեղեկատվության բովանդակությունը և դրա նպատակը, ինչպես նաև այն տրամադրելու կարգն ու պայմանները, չտրամադրելու իրավական հետևանքները:

13. 16-րդ հոդվածում հստակ չէ, թե ինչ մեխանիզմով պետք է իրականացվի քաղաքական կուսակցությունների ընտրական ցուցակներում կանանց և տղամարդկանց հավասար թվաքանակի ներկայացվածության ապահովումը:

14. 17-րդ հոդվածը կիրառական չէ:

15. 18-րդ հոդվածով նախատեսվող հարաբերությունները կարգավորված են «Կուսակցությունների մասին» Հայաստանի հանրապետության օրենքով: Բացի դրանից, ընդունելի չէ հոդվածով նախատեսված՝ կուսակցությունների ընտրական ցուցակներում կամ դեկավար մարմիններում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածություն ապահովելու պահանջը, քանի որ կուսակցությունն ազատ է ընտրելու իր ղեկավար մարմնում աշխատող կամ ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց՝ հաշվի առնելով կուսակցության քաղաքական շահերը, նրանց կուսակցական ակտիվությունը, աշխատանքային, կենսագրական և այլ հատկանիշներ:

16. 19-րդ հոդվածը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **62-րդ** հոդվածի պահանջներից, համաձայն որի Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

17. 20-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հսկողություն կամ վերահսկողություն իրականացնելու լիազորություն չունի: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին զեկույց ներկայացնելու պարտավորություն չունի: Բացի դրանից պարզ չէ «պատասխանատու ստորաբաժանման» իրավական կարգավիճակը:

18. 21-րդ հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ դրանով նախատեսվող հարաբերությունները Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի իրավասություններն են, որոնք սահմանված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

19. 25-րդ հոդվածը հստակեցման կարիք ունի: Մասնավորապես, պարզ չէ, թե հիշյալ հոդվածով նախատեսված պատասխանատվության ձևերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **83.5-**րդ հոդվածի **6-**րդ կետով նախատեսված պատասխանատվության որ ձևերի մեջ է ընդգրկվելու: Նույն հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **83.5-**րդ հոդվածի **2-**րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **9-**րդ հոդվածի **4-**րդ մասի **2-**րդ կետի պահանջները:

20. Նախագծի որոշ հոդվածներով սահմանված դրույթներն անհրաժեշտ է համապատասխանեցնել ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներին և օրենքներում կիրառվող հասկացություններին:

21. Նախագծի հոդվածների մասերի, կետերի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **41-**րդ հոդվածի **3-**րդ մասի պահանջներին:

22. Նախագծով նախատեսված նորմերը հիմնականում կրկնում են «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է՝ նախագիծը կարիք ունի լրամշակման և այս տեսքով ընդունելի չէ:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության **2009** թվականի հունվարի **15-**ի «Հայաստանի Հանրապետության կառավարության **2009** թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու

մասին» N 40-Ն որոշման N 1 հավելվածի 128-րդ կետի՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակով 2009 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը կներկայացնի «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»:

Նախագծի հեղինակներին առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված նախագծի քննարկումից: Առկա խնդիրների փուլային կարգավորման նպատակով, համագործակցելով կառավարության հետ, օրենսդրության վերլուծության միջոցով համապատասխան փոփոխություններ կատարել կոնվենցիային հակասող իրավական ակտերում՝ կանխելով հապճեպ լուծումների բացասական ազդեցությունը պետության, կուսակցությունների, քաղաքացիական հասարակության կայացման գործընթացների վրա և նախագծին անդրադառնալ միայն հայեցակարգի հաստատումից հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Համբարձումյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-422-09.01.2009-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների
ապահովման պետական երաշխիքների մասին**

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ խնդիրները

Սույն օրենքը սահմանում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքները, ուղղված է կանխելու խտրականության բոլոր ձևերը սեռային հատկանիշի հիման վրա եւ պայմաններ ստեղծելու մարդու եւ քաղաքացու իրավունքների, ազատությունների եւ

հնարավորությունների փաստացի իրականացմանը պետական, սոցիալական, տնտեսական, մշակութային, հասարակական եւ քաղաքական կյանքի այլ ոլորտներում:

Սույն օրենքը նպաստում է կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ ՀՀ միջազգային իրավական ակտերի դրույթների զարգացմանը եւ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականության իրականացմանը՝ ստեղծելով հիմքեր հասարակության մեջ քաղաքակիրթ ժողովրդավարական հարաբերությունների հաստատման համար:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

- խտրականություն - սեռի հատկանիշով պայմանավորված անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերություն, բացառություն կամ սահմանափակում, որն անհնար է դարձնում մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը կամ իրականացումը,

- հավասար հնարավորություններ - կանանց եւ տղամարդկանց համար հավասար հնարավորության գործնական պայմանների ապահովում մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների իրականացման ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան, որն էլ ենթադրում է իրավահավասարության հասնելու համար անհրաժեշտ միջոցների եւ պայմանների համակարգ,

- գենդեր - հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց եւ տղամարդկանց միջեւ հասարակայնորեն հիմնավորված տարբերություն եւ հարաբերություն /մշակութային

բնութագրերի ամբողջություն, որը որոշում է կանանց եւ տղամարդկանց սոցիալական վարքը, նրանց փոխհարաբերությունները/

- գենդերային հավասարություն- հասարակության մեջ կանանց եւ տղամարդկանց հավասար կարգավիճակ՝ մարդու իրավունքների եւ հնարավորությունների իրականացման հավասար պայմաններով /հավասար իրավունքներ, հավասար պարտականություններ, հավասար հնարավորություններ/,

- քվոտա - կանանց եւ տղամարդկանց համար հավասար արդյունքների հասնելու միջոց, որը կարող է վերացվել հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում կանանց եւ տղամարդկանց զուգակշռված ներկայացվածության հասնելուն համապատասխան,

- գենդերային վերլուծություն - հասարակության մեջ կանանց եւ տղամարդկանց վրա տարբեր ազդեցությունների գնահատման գործընթաց հասարակության կյանքի բոլոր բնագավառներում, բացառելով կողմերից մեկի դիրքերի ամրապնդմանն ու գերակայությանը օժանդակելը:

Հոդված 3. Խտրականության արգելքը սեռի հատկանիշի հիման վրա

ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների եւ նորմերի համաձայն, կանայք եւ տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ, ազատություններ ու պարտականություններ: Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի եւ անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է: Խտրականությունը սեռի հատկանիշի հիման վրա առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Խտրականություն չեն համարվում՝

- մայրության պաշտպանությունը,
- օրենքով սահմանված կարգով ՀՀ պաշտպանությանը մասնակցելը,
- օրենքով սահմանված կարգով ժամանակավոր հատուկ միջոցառումների ձեռնարկումը /քվոտաներ/ փաստացի իրավահավասարության հասնելու համար:

Հոդված 4. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար

հնարավորությունների ապահովմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները

Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

- կանանց եւ տղամարդկանց իրավահավասարությունն ապահովող օրենսդրության կատարելագործումը եւ զարգացումը, համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,
- նորմատիվ իրավական ակտերի գենդերային փորձաքննության եւ գենդերային վերլուծության իրականացումը,
- սեռային խտրականության կանխարգելման նպատակով հատուկ ծրագրերի ընդունումն ու իրագործումը,
- սեռերի իրավահավասարությունն ապահովող միջոցառումների ներառումը քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրականացմանն ուղղված համապետական եւ սոցիալական ոլորտի զարգացման ծրագրերում,
- կրթական գենդերային ծրագրերի իրականացմանն աջակցելը՝ կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության մշակույթի ձեւավորման եւ երիտասարդության աշխարհայացքի զարգացման նպատակով,
- գենդերային վիճակագրության եւ մոնիտորինգի իրականացումը,
- կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված ինստիտուցիոնալ կառույցի ստեղծումը,
- ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության հարցի հետ կապված:

Հոդված 5. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների մասին օրենսդրությունը

ՀՀ-ում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքները եւ հավասար հնարավորությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով եւ միջազգային պայմանագրերով:

Հոդված 6. Գենդերային վիճակագրության ձեւավորումը եւ մոնիտորինգը կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման համար

ՀՀ տարածքում վիճակագրական հաշվետվությունները կազմվում են գենդերային վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, կուտակման, ամփոփման միջոցով՝ հաշվի առնելով գենդերային ցուցիչը:

Պետական եւ ոչ պետական կառույցները պարբերաբար մոնիտորինգ են իրականացնում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների

վիճակը պարզելու, պետական սոցիալական ծրագրերին եւ ազգային զեկույցների կազմմանն աջակցելու համար:

ԳԼՈՒԽ 2

Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները

պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում

Հոդված 7. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունները պետական կառավարմանը մասնակցելու համար

Պետությունը՝ իրավական, կազմակերպական եւ այլ մեխանիզմների միջոցով երաշխավորում, ստեղծում ու ապահովում է կանանց եւ տղամարդկանց մասնակցության համար հավասար ներկայացվածություն օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններում:

Հոդված 8. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունները տեղական ինքնակառավարմանը մասնակցելու համար

Տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրավական, կազմակերպական եւ այլ մեխանիզմների միջոցով ապահովում են կանանց եւ տղամարդկանց մասնակցության համար հավասար ներկայացվածություն իրենց ղեկավար կազմը ձեւավորելու ժամանակ:

Հոդված 9. Պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու մրցույթների հավասար մատչելիությունը կանանց եւ տղամարդկանց համար

Միայն մեկ սեռի անձանց համար մրցույթների հայտարարումն արգելվում է, բացառությամբ առանձնահատուկ դեպքերի, երբ տվյալ աշխատանքը կարող է կատարվել բացառապես որոշակի սեռի ներկայացուցիչների կողմից: Պետական ծառայության թափուր պաշտոնները /այդ թվում՝ ղեկավար/ զբաղեցվում են մրցույթների միջոցով, որոնցում, օրենքով սահմանված կարգով, հավասար պայմաններով իրավունք ունեն մասնակցելու կանայք եւ տղամարդիկ:

Պետությունը երաշխավորում է կանանց եւ տղամարդկանց հավասար մասնակցությունը պետական ծառայողների ատեստավորման, ծառայությունում առաջխաղացման, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության եւ ծառայության հետ կապված այլ հարցերի դեպքում:

Հոդված 10. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունները տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության անցնելու ընթացքում

Տեղական ինքնակառավարման մարմիններում թափուր պաշտոնները /այդ թվում՝ դեկավար/ զբաղեցվում են մրցույթների միջոցով, որոնցում, օրենքով սահմանված կարգով, հավասար պայմաններով իրավունք ունեն մասնակցելու կանայք եւ տղամարդիկ: Պետությունը երաշխավորում է կանանց եւ տղամարդկանց հավասար մասնակցությունը համայնքում ծառայողների ատեստավորման, ծառայությունում առաջխաղացման, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության եւ ծառայության հետ կապված այլ հարցերի դեպքում:

ԳԼՈՒԽ 3

Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները սոցիալ-տնտեսական ոլորտում

Հոդված 11. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների դեկավարների պարտականությունները սոցիալ-տնտեսական ոլորտում կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության ապահովման ուղղությամբ

Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների դեկավարները, անկախ սեփականության ձեւից, պարտավոր են կանանց եւ տղամարդկանց համար ապահովել հասարակության տնտեսական ռեսուրսների՝ անշարժ եւ շարժական գույքի, հողի, ֆինանսական միջոցների, ձեռնարկատիրական գործունեության մատչելիության, սոցիալական նպաստների հավասար հնարավորություններ:

Հոդված 12. Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության ապահովումը աշխատանքային հարաբերություններում

Աշխատանքային հարաբերություններում կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության հաստատման նպատակով գործատուն, անկախ սեփականության ձեւից ՀՀ աշխատանքային օրենսգրքին համապատասխան, ապահովում է.

- աշխատանքի ընդունվելու հավասար հնարավորություններ, ինչպես նաեւ միատեսակ պահանջներ ու չափանիշներ,
- թափուր աշխատատեղերին հավասար մատչելիություն,
- մրցակցություն հավասար պայմաններում եւ հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն,

- հավասար հնարավորություն որակավորման բարձրացման, վերապատրաստման, ծառայությունում առաջխաղացման համար, ինչպես նաև վերաորակավորվելու հիմքով կանանց եւ տղամարդկանց վարձատրության տարբերության վերացում,
- անձնական արժանապատվության պահպանումը երաշխավորող աշխատանքային եւ ընտանեկան պարտականությունների համատեղման պայմաններ,
- աշխատանքի անվտանգ պայմանների ապահովում,
- արտադրության ծավալների, աշխատանքի կազմակերպման ծավալների փոփոխմամբ պայմանավորված՝ աշխատողների 1/3-ը գերազանցող ազատումների դեպքում կանանց եւ տղամարդկանց համամասնության պահպանում:

Հոդված 13. Գործատուի կողմից սեռի հատկանիշի հիման վրա հետապնդման եւ սեռական ոտնձգության արգելքը

Գործատուն իրավունք չունի տարբեր սեռի աշխատողների նկատմամբ ճնշում գործադրել կամ հետապնդում իրականացնել այն հիմքով, որ նրանք մերժել են գործատուի սեռական ոտնձգությունները կամ գանգատ են ներկայացրել դատարան սեռական խտրականության հիմքով:

Նշված դրդապատճառներով ճնշում կամ գենդերային խտրականության կապակցությամբ հետապնդում իրականացնող գործատուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 14. Խտրականության բացակայությունն ապացուցելու գործատուի պարտականությունը

Դատարանում կամ այլ մարմնում աշխատանքային վեճի քննարկման ժամանակ սեռային խտրականության փաստի ապացուցման պարտականությունը դրվում է գործատուի վրա: Դատարանում պարզաբանումներ տալուց հրաժարվելը դիտվում է որպես խտրականության ճանաչում:

Հոդված 15. Գործատուի պարտականությունը տեղեկատվություն տրամադրել գենդերային իրավահավասարության հարցով լիազորված մարմնին/անձին

Գործատուն, անկախ սեփականության ձևից, պարտավոր է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների հարցի կապակցությամբ տեղեկատվություն տրամադրել լիազորված մարմնին/անձին:

Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքները ընտրական իրավունքն իրականացնելու ժամանակ

Հոդված 16. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունը ակտիվ եւ պասիվ ընտրական իրավունքներն իրականացնելու ժամանակ

Կանայք եւ տղամարդիկ հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ ունեն մասնակցելու քաղաքական գործընթացներում.

- կանայք եւ տղամարդիկ գենդերային ներկայացվածությամբ՝ օրենքով սահմանված քվոտաներով, հավասարապես պետք է ներկայացված լինեն քաղաքական կուսակցությունների ընտրական ցուցակներում,

- քաղաքական կուսակցություններից մեծամասնական ընտրական համակարգով առաջադրվելու դեպքում կանայք եւ տղամարդիկ պետք է ներկայացված լինեն հավասարապես:

Այս պահանջը չկատարելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը եռօրյա ժամկետում տեղեկացնում է համապատասխան կուսակցությանը:

Հոդված 17. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորությունը ընտրական հանձնաժողովները ձեւավորելու ժամանակ

Ընտրական հանձնաժողովները ձեւավորվում են իրավահավասարության սահմանադրական սկզբունքը հաշվի առնելով:

Հոդված 18. Կանանց եւ տղամարդկանց հավասար հնարավորության ապահովումը քաղաքական կուսակցություններում

Քաղաքական կուսակցությունները պարտավոր են կանանց եւ տղամարդկանց համար ապահովել հավասար ներկայացվածություն կուսակցության ղեկավար մարմիններում եւ պաշտոններ առաջադրելու ժամանակ:

ԳԼՈՒԽ 5

Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մեխանիզմները

Հոդված 19. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովումը ՀՀ Ազգային Ժողովի կողմից

ՀՀ Ազգային Ժողովը.

- կանանց եւ տղամարդկանց իրավահավասարությունն ապահովելու նպատակով ձեւավորում եւ զարգացնում է ՀՀ օրենսդրական դաշտը, կատարում է օրենսդրության

գենդերային փորձաքննություն, որն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման, նորմատիվ իրավական ակտերում եւ դրանց նախագծերում գենդերային հավասարության խախտումների փաստերը բացառելու եւ հետագայում վերացնելու նպատակով,

- պետական քաղաքականության իրավական հիմքերը ձեւավորելիս, հաշվի է առնվում քաղաքական եւ հասարակական կյանքում որոշումների ընդունման գործընթացին կանանց եւ տղամարդկանց հավասարակշռված մասնակցության հարցը,

- պետական ապարատում պաշտոնները համալրելու ժամանակ հաշվի է առնում կանանց եւ տղամարդկանց իրավահավասարությունը,

- ԱԺ համակարգում առանձնացվում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված կառուցվածքային ստորաբաժանում /պատասխանատու անձ/,

- կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների իրագործման ոլորտում համագործակցում է հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների եւ այլ մարմինների հետ,

- տարին մեկ անգամ լսում է մարդու իրավունքների պաշտպանին կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման հարցերով,

- պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ, լսում է ՀՀ կառավարության զեկույցը ՀՀ-ում գենդերային իրավահավասարության վիճակի վերաբերյալ:

Հոդված 20. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովումը ՀՀ կառավարության կողմից

ՀՀ Կառավարությունը.

- Ազգային Ժողովի կողմից ձեւավորված գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության օրենսդրական հիմքի վրա մշակում է միասնական պետական քաղաքականություն կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների իրականացման համար,

- վերահսկողություն է իրականացնում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի կատարման նկատմամբ,

- ընդունում է սեռերի իրավահավասարության ապահովմանն ուղղված նպատակային ծրագրեր, ապահովում է դրանց կատարումը,
- աջակցում է քաղաքացիների գենդերային իրազեկման ծրագրերին,
- ուղղորդում եւ վերահսկում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ու պաշտպանությանն ուղղված գործադիր իշխանության մարմինների գործունեությունը,
- կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների իրագործման ոլորտում համագործակցում է հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների եւ այլ մարմինների հետ,
- գործադիր իշխանության մարմինների համակարգում առանձնացվում են կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված կառուցվածքային ստորաբաժանումներ /պատասխանատու անձ/,
- ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ Ազգային Ժողով է ներկայացնում զեկույց՝ գենդերային իրավահավասարության վիճակի վերաբերյալ:

Հոդված 21. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից
 ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը.

- քննարկում է խտրականության, կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության խախտման վերաբերյալ բողոքները եւ միջոցներ է ձեռնարկում խախտված իրավունքները վերականգնելու համար,
- էլույթ է ունենում ԱԺ-ում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման հարցերով,
- տարեկան զեկույցում ներկայացնում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների հետ կապված հարցերը,
- առաջարկություն է ներկայացնում ԱԺ-ում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդարանական լսումներ կազմակերպելու վերաբերյալ,
- մարդու իրավունքների պաշտպանի համակարգում առանձնացվում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված պատասխանատու անձ:

Հոդված 22. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովումը ՏԻՄ-երի կողմից

Տեղական ինքնակառավարման մարմինները կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման բնագավառում իրենց գործողությունները համապատասխանեցնում են գործադիր իշխանության մարմինների գործողությունների հետ, միջոցառումներ են ձեռնարկում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ:

Գործադիր իշխանության մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում ՏԻՄ-երին ցուցաբերում են կազմակերպչական, տեղեկատվական, կրթական եւ այլ տեսակի օգնություն:

Հոդված 23. Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանը

Շահագրգիռ հասարակական կազմակերպությունները.

- մասնակցում են գենդերային հավասարության հարցերի վերաբերյալ պետական մարմինների կողմից ընդունվող որոշումների եւ միջոցառումների մշակմանը, ծրագրերի իրագործմանը,
- դատարաններում եւ այլ պետական մարմիններում ներկայացնում եւ պաշտպանում են խտրականության ենթարկված անձանց իրավունքները,
- աջակցում են գենդերային իրավահավասարության ծրագրերի իրականացմանը,
- իրավունք ունեն պետական եւ համայնքային ծրագրերով ու միջոցառումներով սահմանված ծավալով ու կարգով համապատասխան` գործադիր իշխանության մարմիններից ստանալ մեթոդական, տեղեկատվական եւ այլ տեսակի օգնություն, խտրականության վերացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու համար,
- իրավունք ունեն գործադիր իշխանության մարմիններից ստանալ տեղեկատվություն կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության հարցերի հետ կապված, գենդերային վերլուծություն եւ մոնիտորինգ իրականացնելու համար,
- կատարում են օրենսդրության գենդերային փորձաքննություն,
- իրավունք ունեն պատրաստելու տարեկան հրապարակային զեկույցներ կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների հարցերի հետ կապված,

- օգտվում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

Հոդված 24. Հսկողությունը սույն օրենքի կատարման նկատմամբ

Սույն օրենքի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6

Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

Հոդված 25. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ փաստեր հայտնաբերելու դեպքում, սույն օրենքի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները իրավունք ունեն.

- գրավոր միջնորդություններ ներկայացնելու խախտումները վերացնելու համար,
- ՋԼՄ-ների միջոցով հրապարակել այն կազմակերպությունների կամ անձանց անունները, որոնք խախտել են սույն օրենքը:

Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7

Օրենքի ուժի մեջ մտնելը

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հիմնավորում

«Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

Մույն օրենքը սահմանում է կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման պետական երաշխիքները, ուղղված է կանխելու խտրականության բոլոր ձևերը սեռային հատկանիշի հիման վրա եւ պայմաններ ստեղծելու մարդու եւ քաղաքացու իրավունքների, ազատությունների եւ հնարավորությունների փաստացի իրականացմանը պետական, հասարակական, քաղաքական կյանքի ոլորտներում:

Օրենքի ընդունումը բխում է՝ Եվրախորհրդի Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերից, ՀՀ կառավարության «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման **2004-2010 թ.թ.** ազգային ծրագրից /ՀՀ կառավարության **2004թ.** ապրիլի **8-ի** թիվ **645** որոշում/, ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայից, Պեկինի **4-րդ** համաշխարհային համաժողովի /**1995թ.**/ հանձնարարականներից, ՄԱԿ-ի հազարամյակի հռչակագրի պահանջներից եւ ՀՀ միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարումից: Օրենքը կնպաստի կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովմանը՝ որպես ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն եւ քաղաքացիական հասարակություն կառուցելու նախապայման: